



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, [ss@ysmu.am](mailto:ss@ysmu.am)

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 19 ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) կանոնադրության 55-րդ կետը, ԵՊԲՀ գիտական խորհուրդը, լսելով ԵՊԲՀ ռեկտոր Ա.Մուրադյանի զեկուցումը, ռեկտորի խորհրդական Գ.Թամամյանի, կարիերայի կենտրոնի ղեկավար Խ.Մարգարյանի, հանրային առողջության և առողջապահության կազմակերպման ամբիոնի դասախոս՝ Կ.Կոստանյանի և գիտական քարտուղար Տ.Գ.Ավագյանի հաղորդումները,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ ԵՊԲՀ ռեկտոր Ա.Մուրադյանի 2019 թվականի տարեկան ամփոփիչ հաշվետվությանը (կցվում է) (19-12-19-01):

2. Հաստատել՝

- 1) ԵՊԲՀ հիմնադրման 100-ամյակը նշելու միջոցառումների տեսլականը և հանձնաժողովի կազմը (19-12-19-02).
- 2) «Առաջնորդենք ապագան» մասնագիտական կողմնորոշման ծրագիրը (կցվում է), (19-12-19-03).
- 3) ԵՊԲՀ հիվանդանոցային համալիրների կազմում գործող, արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող ստորաբաժանումներում ուսումնասիրություն իրականացնելու հարցաթերթիկները (կցվում է), (19-12-19-04):

3. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը՝ կլինիկական ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ Նարինե Ռուբենի Միրզոյանին պրոֆեսորի և ֆարմակոլոգիայի ամբիոնի դոցենտ Լուսինե Գազիկի Դեբրյանին շնորհել դոցենտի գիտական կոչումներ՝ որոշումները սահմանված կարգով ներկայացնելով ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը (կցվում է) (19-12-19-05):

4. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Տ.Գ. ԱՎԱԳՅԱՆ